## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2019 թվականի N 11-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Գետամեջ համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Գետամեջ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2019 թվականի N 12-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Գետամեջ համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԳԵՏԱՄԵՋԻ ... 03301116

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ավագանու
2019 թվականի մայիսի 10-ի N 12-Ա որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Գետամեջ համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում* |
| **Մարզ** | *Կոտայք* |
| **Համայնքը /համայնքները** | *Գետամեջ* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Երևանից ' 15կմ, Հրազդանից' 35կմ* |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | *788 մարդ* |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակա-վայրի** | |
| **Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն** | *Համայնքն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, որը սպասարկվում է «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից, գազաֆիկացված է, ոռոգելի են միայն տնամերձ հողամասերը, համայնքի գլխավոր փողոցները հիմնականում լուսավորված են:* |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Գետամեջ համայնքի ճանապարհների վնասվածության պատճառով տրանսպորտային միջոցների երթևեկությունը դառնում է անհարմար: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ճանապարհների հիմնանորոգման, բարեկարգման և կառուցման աշխատանքներ՝ ապահովելով տրանսպորտային միջոցների երթևեկությունը, ինչպես նաև համայնքը կլինի ավելի գրավիչ ներդրողների համար և կապահովի բարեկեցիկ միջավայր:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Ծրագրային հայտը բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներից և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունից:*<br>*Գետամեջ համայնքի 1-ին, 2-րդ և 4-րդ փողոցներն հանդիսանում են համայնքի գլխավոր փողոցները, որոնց միջոցով ապահովվում է համայնքի կապը համապատասխանաբար Աբովյան, Նոր Հաճն և Երևան քաղաքների հետ: Հիշյալ փողոցների ասֆալտապատումը հնարավորություն կընձեռնի համայնքի բնակիչներին իրենց սեփական բերքը տեղափոխել վերոհիշյալ մոտակա քաղաքների շուկաներ:*<br>*Փողոցների բարեկարգ վիճակը կնպաստի նաև տուրիզմի զարգացմանը, քանի որ համայնքը գտնվելով Հրազդան գետի կիրճում, ունի տուրիզմի զարգացման հնարավոր նախադրյալները:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝*<br>• *Համաֆինանսավորման դեպքում՝ ֆինանսական ներդրման ապահովում,*<br>• *Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում,*<br>• *Շինարարության թույլտվության տրամադրում,*<br>• *Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում,*<br>• *Հեղինակային հսկողության ծառայությունների համար պայմանագրի կնքում,*<br>• *Շինարարության ընթացքում շինարարական, ծառայությունների մատուցման աշխատանքների որակին և ծավալին հետևում,*<br>• *Ծրագրի վերջնական արդյունքի ընդունում և վճարում:* |

**Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում**

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների՝ ճանապարհների, արժեքը կավելանա ծրագրի արժեքի չափով:
Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:

**Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա**

Համայնքի գլխավոր փողոցների ասֆալտապատման արդյունքում 788 բնակիչները, որը կազմում է համայնքի բնակչության 100%-ը, կունենան հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, կնվազեն տրանսպորտային միջոցների ամորտիզացիոն ծախսերը, կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը:

**Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր**

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի 10 ժամանակավոր աշխատատեղ:

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

Նախորդ տարվա բյուջեն՝ 33633000 դրամ.

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները** այդ թվում՝ | 29980900 | 33633000 | 112 |
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 25798000 | 20731500 | 80 |
| - Սեփական եկամուտներ | 15365300 | 10298800 | 67 |
| -Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 4182900 | 12901500 | 308 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,** որից՝ | 40333900 | 25080700 | 62 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 25798000 | 20728500 | 80 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 14535900 | 4352200 | 30 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,** որից՝ | 14535900 | 4352200 | 30 |
| - ճանապարհաշինություն | 5950000 | 2165200 | 36 |
| - փողոցային լուսավորություն | 4132900 | 260000 | 6 |
| - օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում | 1953000 | 1248000 | 64 |
| - ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 1600000 | 0.0 | 0 |
| - հիմնական ընդհանուր կրթություն | 900000 | 67000 | 75 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

**45627300** դրամ.

| | Պլանը |
|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում** այդ թվում՝ | 26722000 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 26222000 |
| - սեփական եկամուտներ | 15789300 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 500000 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,** որից՝ | 45627300 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 26222000 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 19405300 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,** որից՝ | 19405300 |

| | | |
|---|---|---|
| | - օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում | 1400000 |
| | - ճանապարհաշինություն | 10000000 |
| | - փողոցային լուսավորություն | 8005300 |

| | |
|---|---|
| Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով | ***Համայնքի 2019 թվականի կանխատեսվող եկամուտները՝ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը, կազմում են 45627300 ՀՀ դրամ, որն ուղղվելու հետևյալ պարտադիր ծախսերին՝***<br>1. Աշխատանքի վարձատրություն՝ 17600000 դրամ.<br>2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝ 8422000 դրամ.<br>3. Սոցիալական նպաստներ՝ 200000 դրամ.<br>4. Շենքերի շինությունների կառուցում՝ 8505300 դրամ.<br>5. Ասֆալտապատում ՝ 10000000 դրամ.<br>6. Այլ հիմնական միջոցներ ՝ 900000 դրամ. |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն | 17717547 դրամ (100%) |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | 9744650 դրամ (55%) |
| Այլ ներդրողներ | |
| Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբը՝ հուլիս 2019թ. Տևողությունը՝ 2 ամիս |
| Ծրագրի ծախսերը | Առկա են ծրագրի իրականացման համար սահմանված կարգով կազմված և փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվարկային փաստաթղթեր, ըստ որի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 17717547 դրամ, այդ թվում՝<br>- Նախագծի պատվիրման ծախսերը – 269 705դրամ,<br>- Շին մոնտաժային աշխատանքները – 17005694 դրամ,<br>- Տեխնիկական հսկողությունը – 340114 դրամ,<br>- Հեղինակային հսկողությունը – 102034 դրամ: |
| Ամսաթիվ | «10» մայիսի 2019թ. |

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Ռ. Սարգսյան
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ 077779822, getamejmc@mail.ru

Համայնքի ղեկավար՝ Ա. Մուրադյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2019 թվականի N 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Գետամեջ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ավագանու
2019 թվականի մայիսի 10-ի N 13-Ա որոշման

# ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Գետամեջ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում* |
| **Մարզ** | *Կոտայք* |
| **Համայնքը /համայնքները** | *Գետամեջ* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Երևանից ՝ 15կմ, Հրազդանից՝ 35կմ* |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | *788 մարդ* |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակա-վայրի** | |
| **Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն** | *Համայնքն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, որը սպասարկվում է «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից, գազաֆիկացված է, ոռոգելի են միայն տնամերձ հողամասերը, համայնքի գլխավոր փողոցները հիմնականում լուսավորված են:* |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Գետամեջ համայնքի մշակույթի տունը գտնվում է համայնքապետարանի շենքում և դրա հիմնանորոգումը առաջնային և կարևոր անհրաժեշտություն է համայնքի զարգացման և մշակութային արժեքների գնահատման, կրթման ու դաստիարակման՝ սերունդներին արտադպրոցական կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Ծրագրային հայտը բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներից և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունից:*<br>*Մշակույթը ուրույն դեր ունի խոսքի, արվեստի, գեղանկարչության, երաժշտության, մշակույթի արժեքների իմացության, ճանաչման առումով:*<br>*Մշակույթի տան առկայությունը որպես կարևորագույն կառույց հիմքն է մարդու դաստիարակության, կազմավորման, նրա ներաշխարհի և արտաշխարհի կապերի ամրապնդման ռազմավարական զարգացմանը:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝*<br>• *Համաֆինանսավորման դեպքում՝ ֆինանսական ներդրման ապահովում,*<br>• *Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում,*<br>• *Շինարարության թույլտվության տրամադրում,*<br>• *Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերություն ընտրելու մրցույթի կազմակերպում և հաղթողի հետ պայմանագրի կնքում,*<br>• *Հեղինակային հսկողության ծառայությունների համար պայմանագրի կնքում,*<br>• *Շինարարության ընթացքում շինարարական, ծառայությունների մատուցման աշխատանքների որակին և ծավալին հետևում,*<br>• *Ծրագրի վերջնական արդյունքի ընդունում և վճարում:* |

**Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում**

*Շինությունը գտնվում է համայնքի հաշվեկշռում, հետևաբար, ծրագրի իրականացման արդյունքում կավելանա համայնքի հիմնական ակտիվներին:*

**Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա**

*Գետամեջ համայնքի բնակչությունը կազմում է 788 մարդ.*

- *Համայնքի մշակույթի կենտրոնի առկայությունը հիմքն է համայնքի զարգացվածության, երիտասարդների զբաղվածության, կրթման, մշակութային ակտիվ գործունեության, որի բացակայությունը բացասական ազդեցություն է ունենում համայնքի բնակչության՝ մասնավորապես երիտասարդների շրջանում:*
- *Համայնքի բնակիչներից շատերը չեն կարողանում իրենց հնարավորության սահմաններում (անբավարար տրանսպորտային միջոցներ, ճանապարհային ծախս և այլն) օգտվել մշակութային արժեքներից (երգ, երաժշտություն, նկարչություն, շախմատ, սպորտ, արհեստ, արվեստ):*

**Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր**

*Հիմք ընդունելով աշխատանքային նախագիծը, ծրագրի իրականացմամբ ընթացքում կունենանք 20-30 ժամանակավոր աշխատատեղեր, իսկ աշխատանքների ավարտին համայնքում կբացվեն շուրջ 15 հիմնական աշխատատեղեր:*

**Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը**

*Նախորդ տարվա բյուջեն՝ 33633000 դրամ.*

| | *Պլանը* | *Փաստացին* | *Տոկոսը* |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | *29980900* | *33633000* | *112* |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | *25798000* | *20731500* | *80* |
| *- Սեփական եկամուտներ* | *15365300* | *10298800* | *67* |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | *4182900* | *12901500* | *308* |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | *40333900* | *25080700* | *62* |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | *25798000* | *20728500* | *80* |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | *14535900* | *4352200* | *30* |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | *14535900* | *4352200* | *30* |
| *- ճանապարհաշինություն* | *5950000* | *2165200* | *36* |
| *- փողոցային լուսավորություն* | *4132900* | *260000* | *6* |
| *- օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում* | *1953000* | *1248000* | *64* |
| *- ընդհանուր բնույթի հանրային ծառայություն* | *1600000* | *0.0* | *0* |
| *- հիմնական ընդհանուր կրթություն* | *900000* | *67000* | *75* |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

***45627300*** *դրամ.*

| | *Պլանը* |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում*** *այդ թվում՝* | *26722000* |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | *26222000* |
| *- սեփական եկամուտներ* | *15789300* |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | *500000* |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | *45627300* |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | *26222000* |

| | | |
|---|---|---|
| | -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 19405300 |
| | ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | 19405300 |
| | - *օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում* | 1400000 |
| | - *ճանապարհաշինություն* | 10000000 |
| | - *փողոցային լուսավորություն* | 8005300 |
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Համայնքի 2019 թվականի կանխատեսվող եկամուտները՝ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը, կազմում են 45627300 ՀՀ դրամ, որն ուղղվելու հետևյալ պարտադիր ծախսերին՝<br>*1.* Աշխատանքի վարձատրություն՝ 17600000 դրամ.<br>*2.* Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝ 8422000 դրամ.<br>*3.* Սոցիալական նպաստներ՝ 200000 դրամ.<br>*4.* Շենքերի շինությունների կառուցում՝ 8505300 դրամ.<br>*5.* Ասֆալտապատում ՝ 10000000 դրամ.<br>*6.* Այլ հիմնական միջոցներ ՝ 900000 դրամ. | |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | *15 000 000 դրամ (100%)* | |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *10 500 000 դրամ (70%)* | |
| **Այլ ներդրողներ** | *չկա* | |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբ հունիս 2019թ.* *Տևողությունը՝ 4 ամիս* | |
| **Ծրագրի ծախսերը** | *Ծրագրի իրականացման համար դեռևս սահմանված կարգով կազմված, փորձաքննություն անցած և ընդունված նախագծանախահաշվային փաստաթղթեր չկան: Վերջիններիս կազմումը ընթացքի մեջ է:* | |
| **Ամսաթիվ** | *«10» մայիսի 2019թ.* | |

**Համայնքի տնտեսական պատասխանատու՝** **Ռ. Սարգսյան**
**Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝** **077779822, getamejmc@mail.ru**

---

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մուրադյան**
(անունը, ազգանունը)

Կ.Տ.